XXVI

ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԴԱՐԸ ?)

Մատենադարանի № 3964 ձեռագիրն աղոթքների, փիլիսոփայական, պատմական և այլ նյութերի ժողովածու է, ընդօրինակած զանազան մարդկանց կողմից XVII—XIX դարերում։ Ժողովածուի 78-րդ թերթում գտնվում է ստորև բերվող համառոտ ժամանակագրությունը, որն ընդգրկում է 885—1309 թվականներին վերաբերող մի քանի տեղեկություններ։ Ժամանակագրության հեղինակի մասին ոչինչ չենք կարող ասել։ Եթե ընդունենք, որ ժամանակագրությունը մեկ անձնավորություն է կազմել, ապա կարելի է ենթադրել, որ այն XIV դարի առաջին տասնամյակից շուտ առաջ գալ չէր կարող, սակայն դրա համար հավաստի և անվիճելի փաստեր չունենք։ Սույն ժամանակագրության վերջին մասը՝ սկսած 1292 թվի «...առաւ Հռոմկլայն ի Մարայ սուլթանէն կաթողիկոսն Ստեփանոս...» վկայությունից մինչև վերջ, գտնում ենք Մատենադարանի № 482 ժողովածուի 54ա էջում։ Այս տեղեկությունները խիստ համառոտ են, մինչդեռ ժամանակագրության առաջին մասը, որը վերաբերում է Բագրատունիներին և սրանց ժամանակաշրջանին, մի փոքր ընդարձակ է։ Ամենից հավանականն այն է, որ գործ ունենք ժամանակագրական երկու տարբեր հատվածների հետ, մեկը երևի դրված Սյունիքում, մյուսը Կիլիկիայում, որոնք հետագայում միացվել են իրար։ Տողատակ տրված են 482 ժողովածուի ժամանակագրական հատվածի տարընթերցվածները։

Ի թվին ՅԼԴ (885) զԱշոտ Բագրատունի թագաւոր օծին, 78։
Դեսրք կաթողիկոսին, հրամանաւ ամիրպետին ամիր Ահմատին
խորհրդով Գրիգոր Սուփանայ Սիւնեցի իշխանի և միւս Գրիգորի
Դերենկայ Արծրունեաց իշխանի, որ թագաւորեաց ամս Ե (5) և
5 վախճանեցաւ։[1] Եւ նստաւ որդի նորա Սմբատ ի տեղի հօր իւրոյ,
որ յետոյ նահատակեցաւ ի Յուսփայ։

Իսկ ի թվին ՅԾԸ (909) ի գալն Յուսփայ զօրավարին
առաքին, որդի Դերենկայ Արծրունոյն Գագիկ ապստամբեալ ի
Սմբատ թագաւորէ, խորհրդով Յուսփայ, թագաւորէ ի Վասպու-
10 րականի։[2]

Իսկ ի թվին ՅԿԲ (913) կացուցանի սպարապետ եղբօր որդի
Սմբատայ Աշոտ։ Եւ սրգին Սմբատայ թագաւորի՝ Աշոտ կայսրն
Ռոմանոս թագաւորեցուցանէ ի տեղի հօր իւրոյ յաշխարհս Հա-
յոց։[3] Եւ իշխէին Բագրատունիք Շիրակայ և Այրարատու մինչ ի
15 Գեղամ և մինչ ի Յուխտիսն և մինչ ի Կարին և մինչ ի սահ-
մանս Վասբուրականի և մինչ ի Զորոցգեան և մինչ ի Գարդման
և Սիւնիս կատարեալ էր ի նոցանէ։ Ապա ի նուազեալ Բագրա-
տունեաց թագաւորութեանն է ի զօրանալ ձեռին իսմայելական-
ի հատեալ և բաժանեալ տեղին ամենայն գահ գլխաւոր նախա-
20 բարացն և թագ կապեալ ինքեանց թագաւորեցին նախ Արծրուն-
եաց Գագիկ և ապա Վրաց բդեշխն Ատրներսեհ և Աղվանից Հա-
մամ և Զորոյգետեցիքն, որ Կիւրիկեանք կոչին նաև Կարուցն և
Վանանդացն, որ Բասենեանք կոչին։

Եւ ապա Սիսականք Սմբատ որդի Սահակայ որդւոյ Աշոտի, 78բ
25 որ ունէր կին զՇահնդուխտ դուստր Սևադա իշխանի Աղվանից և
տուեալ էր զԹոռն իւր զդուստր Վասակայ որդւոյ իւրոյ զԿաղր-
միտէ կին Գագկայ թագաւորի որդւոյ Աշոտի, որ շինեաց զսբ-
բատեսիլն զմեծ կաթուղիկէն յԱնի, հրամանաւ սուլթանին Խո-
րասանու, թագաւորէ Սմբատ ի վերայ Սիւնեաց աշխարհի։

30 Ի թվին ՆՂԸ (1049) Վրաց թագաւորն Դաւիթ և Հայոց Գա-
գիկ ի Վանանդ, Յունաց Մանամախ զօրացան Վիրք և տիրեցին
մերոյ աշխարհի, և Օրբելեանքն յառաջ եկին։[4]

Ի ՈՀԳ (1224) թվին սկիզբն ելանելոյ թատարին և տիրե-
լոյ բոլոր աշխարհիս։[5] Որոց յառաջ եկին և տիրեցին Զ (1251)
թվին Ելիկումն և Սմբատ ե Տարոայիճ որդիք Լիպարտին։

ՉԽԱ (1292) առաւ Հռոմկլայն ի Մսրայ սուլթանէն և կաթողիկոսն Սահփանոս և ամենայն սրբութիւնք վերեցան։[1]

Ի թվին ՉԽԶ (1297) էր աշխարհակալ Ղազանն և եպիսկոպոս Սիւնեաց Ստեփանոս Տարսայիճի որդի և եպիսկոպոս Թագեոսի Առաքելոյ[ն] Տիրացու, որ բաղում նեղութիւն կրեաց յան օրինաց յաւերել տանց և շինուածոց վանից ի չարագլխէն Նավուզայ։[2]

Եւ Թագաւոր Կիլիկեայ տանն Հեթում բարեպաշտօն և հայրապետ Գրիգոր Անաւարզացին։

Ի ՉՃԽԶ (1197) թվին Թագաւորեաց Լևոն Բագրատունեաց ի Կիլիկիա։[8]

Ի ՉՃԾԴ (653) թվին յետ ծննդեանն Քրիստոսի ելն Մահմատն։

Ի ՉՃՀԸ (1229) թվին Հայոց, ել թաթարն և գլխա[ւոր] զորուն էր Զարմաղանն։

ԷՃԾԴ (1304) խարաճն եղաւ։

ԷՃԽԱ (1292) Հռոմկլայն աւերեցաւ։

ԷՃԾ (1301) Ղազան մեռաւ։[9]

ԷՃԾԸ (1309) Ապուսայիտն[10] մեռաւ։

---

1 թվին ԷՃԽԱ փխ. ՉԽԱ, Հռոմկլայն աւերեցաւ, և չիք։ 2 Սահփաննոս, գերեցին 3 ի չիք, ԷՃԽԶ փխ. ՉԽԶ։ 4 Ստեփաննոս, Թադէոսի։ 5 նեղութիւնս։ 6 յաւերել։ 7 Նաւրուզայ։ 10 ի չիք, Լէոն։ 12 ի չիք, Մահմատայ։ 14 գլուխ փխ. գլխա[ւոր]։ 17-րդ տողը չիք։ 18 Ղազան։ 19 Ապուհայիտ խանն։

ԹԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես էջ 260, ծանոթ. 16, 18։

2. Տես և հմմտ. Թ. Արծրունի «Պատմութիւն տանն Արծրունեաց», Ս. Պետերբուրգ, 1887, դպր. Դ, գլ. Գ, էջ 284—288։

3. Աշոտ Երկաթի թագավորության ժամանակի մասին տես էջ 260, ծանոթ. 20։

4. Սույն հատվածը վերցված է Ստ. Օրբելյանի պատմությունից։ Տես և հմմտ. նույն տեղ, էջ 373։

5. Խոսքը վերաբերում է Խորեզմի շահ Ջալալ-էդ-դինի 1225 թ. դեպի Հայաստան կատարած արշավանքին։

6. Տես և հմմտ. էջ 86, 99, ծանոթ. 120։

7. Սույն հատվածը վերցված է Ստ. Օրբելյանի պատմությունից։ Տես և հմմտ. նույն տեղ, էջ. 473։

8. Տես և հմմտ. էջ 77, էջ 51, ծանոթ. 9։

9. Ղազան ղանը մահացել է 1304 թ. մայիսի 17-ին։

10. Արդյո՞ք Արու-Սայիդն է— մեռած 1335 թ. նոյեմբերի 30-ին։